ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Նկարում ո՞ր տառով է պատկերված հարավային բևեռային շրջագիծը.**

1) Ե
2) Զ
3) Թ
4) Դ



2 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 2 500 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ–ում՝ 25 կմ
2) 1 սմ–ում՝ 2,5 կմ
3) 1 սմ–ում՝ 250 կմ
4) 1 սմ–ում՝ 250 մ

3 **Երկու կետերի հեռավորությունը քարտեզում 16 սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1 : 2 400 000: Կետերի միջև իրական հեռավորությունը կլինի.**

1) 384 կմ
2) 3840 կմ
3) 15 կմ
4) 150 կմ

4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տվյալ պահին նույն միջօրեականի վրա գտնվող վայրերում, կախված դրանց աշխարհագրական լայնությունից, գրանցվում են տարբեր տեղական ժամանակներ:
2) Բևեռային շառավիղը մեծ է հասարակածային շառավղից:
3) Գլոբուսի վրա բոլոր միջօրեականներն իրար հավասար են:
4) Հս. լ. 66° 30′ զուգահեռականի վրա գիշերահավասարի երևույթը տարվա մեջ նկատվում է մեկ անգամ՝ դեկտեմբերի 22–ին:

5 **Բացարձակ խոնավության հարաբերությունը խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանի օդը հագեցնելու համար, կոչվում է.**

1) միջին խոնավություն
2) նվազագույն խոնավություն
3) առավելագույն խոնավություն
4) հարաբերական խոնավություն

6 **Այն օդային զանգվածները, որոնք ձևավորվում են 20^0– 40^0 աշխարհագրական լայնություններում և բնորոշվում են բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ (մեծ փոշոտվածության պատճառով), կոչվում են.**

1) արևադարձային օդային զանգվածներ
2) արկտիկական (անտարկտիկական) օդային զանգվածներ
3) բարեխառն օդային զանգվածներ
4) հասարակածային օդային զանգվածներ

7 **Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է.**

1) օվկիանոսներից և ծովերից տվյալ վայրի ունեցած հեռավորությունից
2) գերիշխող քամիներից
3) տվյալ վայրի բուսապատվածության աստիճանից
4) տվյալ վայրի բացարձակ բարձրությունից

8 **Օդի բացարձակ խոնավությունը 18 գ/մ³ է: Տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 30 գ/մ³ խոնավություն: Օդի հարաբերական խոնավությունը կլինի.**

1) 60 %
2) 70 %
3) 40 %
4) 50 %

9 **Ո՞ր մայրցամաքի ռելիեֆի կտրվածքն է պատկերված արևմուտքից արևելք ուղղությամբ.**



1) Անտարկտիդա
2) Հարավային Ամերիկա
3) Աֆրիկա
4) Ավստրալիա

10 **Կլիմագրամի միջոցով որոշել, թե որ սեզոնին են դիտվում օդի ամենաբարձր միջին ամսական ջերմաստիճանները հյուսիսային կիսագնդի Գ բնակավայրում.**

1) աշնանը
2) ձմռանը
3) գարնանը
4) ամռանը



11 **«Գետ — ծոց» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Ինդոս — Պարսից
2) Զամբեզի — Գվինեական
3) Միսիսիպի — Հուդզոնի
4) Գանգես — Բենգալական

12 **Ո՞ր բնական զոնային բնորոշ բուսատեսակներ են շոկոլադի (կակաոյի) ծառը, կաուչուկատու հևեան, հսկա ֆիկուսը.**

1) հասարակածային խոնավ մշտադալար անտառների
2) բարեխառն գոտու լայնատերև անտառների
3) մերձարևադարձային մշտադալար անտառների և թփուտների
4) սավաննաների և նոսր անտառների

13 **Բնութագրումով որոշել կղզին.**

Կղզու գրեթե կենտրոնով անցնում է հասարակածը: Այն Մալակկայի նեղուցով բաժանվում է Մալակկա թերակղզուց: Ո՞ր կղզին է.

1) Ճավա
2) Սուլավեսի
3) Կալիմանտան
4) Սումատրա

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում տեղումները սակավ են, ցածր ճնշման գոտիներում՝ առատ:
2) Երկրագնդի վրա առանձնացնում են մթնոլորտային ցածր ճնշման չորս և բարձր ճնշման երեք գոտի:
3) Մթնոլորտային ճնշման գոտիների դիրքն ամբողջ տարվա ընթացքում անփոփոխ է:
4) Հասարակածային շրջաններում մթնոլորտային ճնշումը միշտ բարձր է:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Դեկտեմբերի 22–ը ձմեռային գիշերահավասարի օրն է:
2) Լոնդոնը առաջին ժամային գոտում է:
3) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հվ. լ. 23° 30′–ի վրա:
4) Երկրագունդը միջօրեականներով բաժանված է 15 ժամային գոտիների:

16 **«Գետ — աշխարհամաս» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Լուար — Ամերիկա
2) Ռիոն — Ասիա
3) Հռենոս — Ասիա
4) Պո — Աֆրիկա

17 **Նիագարա գետով իրար կապված լճեր են.**

1) Օնտարիոն և Հուրոնը
2) Միչիգանը և Հուրոնը
3) Էրին և Օնտարիոն
4) Հուրոնը և Էրին

18 **«Հարթավայր — դրա տարածքով հոսող գետ» զույգերից ո՞րն է ճիշտը.**

1) Կենտրոնական հարթավայր — Յուկոն
2) Մեծ հարթավայրեր — Սուրբ Լավրենտիոս
3) Մերձատլանտյան դաշտավայր — Մակենզի
4) Մերձմեքսիկական դաշտավայր — Միսիսիպի

19 **Ո՞ր լեռներն են քարտեզում նշված Գ տառով.**

1) Կովկասի
2) Հինդուկուշի
3) Էլբուրսի
4) Տյան Շանի



20 **Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Է տառով.**

1) Փեկին
2) Դելի
3) Սեուլ
4) Տոկիո

21 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Միգրացիայի ինտենսիվությունը առավել բարձր է ծերերի և կանանց շրջանում:
2) Միգրացիայի պատճառ կարող է դառնալ բնական և տեխնածին աղետների հետևանքով էկոլոգիական իրավիճակի վատթարացումը:
3) Երկրի բնակչության թվաքանակը փոխվում է ներքին միգրացիայի շնորհիվ:
4) Ներկայումս արտաքին միգրացիայի հիմնական պատճառը կրոնականն է:

22 **Հասարակության զարգացման մեջ քաղաքների դերի մեծացման պատմական գործընթացը, որն արտահայտվում է բնակչության ընդհանուր թվում քաղաքային բնակչության տեսակարար կշռի ավելացմամբ և քաղաքային ապրելակերպի տարածմամբ, կոչվում է.**

1) միգրացիա
2) դեպոպուլյացիա
3) ուրբանիզացիա
4) ագլոմերացիա

23 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Տարածքի մեծությամբ և բնակչության թվով Եվրոպայում խոշոր երկրներից է: Հարուստ է քարածխի և երկաթաքարի պաշարներով: Բնակչությունը բնութագրվում է ցածր բնական աճով: Բնակչության թվով երկրորդ ազգը ռուսներն են: Երկրի տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի Սև ծովի ափին տեղակայված լինելը: Ո՞րն է այդ երկիրը.

1) Գերմանիան
2) Լեհաստանը
3) Ուկրաինան
4) Բելառուսը

24 **Երկրի բնակչության թիվը կազմում է 365 600 մարդ, ծնելիության գործակիցը՝ 5 ‰: Ծնվածների բացարձակ թիվը կկազմի.**

1) 1980 մարդ
2) 2028 մարդ
3) 1828 մարդ
4) 1628 մարդ

25 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Բնակչության ծնելիությունն ու մահացությունը հաշվում են տոկոսով կամ պրոմիլներով:
2) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներին բնորոշ է ցածր ծնելիությունը, բարձր մահացությունը և ցածր բնական աճը:
3) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպին են պատկանում Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները:
4) «Ժողովրդագրական ճգնաժամը» բնորոշ է զարգացած երկրներին:

26 **Ընտրել «պետություն — մայրաքաղաք» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) Սիրիա
2) Հորդանան
3) Արաբական Միացյալ Էմիրություններ
4) Օման

ա. Աբու Դաբի
բ. Մասկատ
գ. Դամասկոս
դ. Ամման

1) 1–ա, 2–գ, 3–բ, 4–դ
2) 1–դ, 2–բ, 3–ա, 4–գ
3) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
4) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ

27 **«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
2) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն
3) հաստոց —մետաղաձուլություն
4) պլաստմասսա — մեքենաշինություն

28 **Արևելյան Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Երկրների մեծ մասի տնտեսությունը հետարդյունաբերական զարգացման փուլում է:
2) Էլեկտրաէներգետիկայի գերակշիռ մասը տալիս են ջրային էլեկտրակայանները:
3) Երկրներին բնորոշ է բնակչության վերարտադրության երկրորդ տիպը:
4) Տարածաշրջանում մեծ թիվ են կազմում սլավոնական ժողովուրդները:

29 **Բնակչության բացարձակ թվի նվազումը (ապաբնակեցումը) առավելապես բնորոշ է.**

1) Ռուսաստանին և Ուկրաինային
2) Թուրքմենստանին և Ուզբեկստանին
3) Ղազախստանին և Իրանին
4) Ավստրալիային և Ճապոնիային

30 **Սեռատարիքային բուրգը բնորոշ է.**

1) Բելգիային
2) Հնդկաստանին
3) Ֆրանսիային
4) ԱՄՆ–ին



31 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) ԱՄՆ–ի Կալիֆոռնիա նահանգում տեղեկատվական տեխնոլոգիական բարդ սարքավորումների արտադրությունները կենտրոնացած են Սթենֆորդի համալսարանի շուրջը:
2) Մեքենաշինության նյութատար ճյուղեր են ռադիոէլեկտրոնիկան, ճշգրիտ մեքենաների արտադրությունը:
3) Զարգացող երկրներում զարգացած են մեքենաշինության գիտատար ճյուղերը:
4) Զարգացած երկրների մեքենաշինության առաջատար ճյուղը գյուղատնտե–սական մեքենաշինությունն է:

32 **Ընտրել «մշակաբույս — բուսաբուծության ճյուղ» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) ծխախոտ	ա. հացահատիկային
2) գարի	բ. տեխնիկական
3) վարունգ	գ. այգեգործություն
4) խնձոր	դ. բանջարաբոստանային

1) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
2) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
3) 1–բ, 2–գ, 3–ա, 4–դ
4) 1–ա, 2–գ, 3–դ, 4–բ

33 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագած ու Գեղամա լեռնազանգվածները:
2) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում ձգվում է Հայկական պար լեռնաշղթան:
3) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում՝ Միջագետքի հարևանությամբ, ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
4) Հայկական լեռնաշխարհն արևելքից սահմանակցում է Արաբական սարահարթին:

34 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:
2) Ալյումինի արդյունաբերության կենտրոնը Վանաձորն է:
3) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումն ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
4) ՀՀ էլեկտրակայանների հզորության կառուցվածքում առավել մեծ բաժին ունեն ջէկերը:

35 **Սյունիքի մարզը սահմանակից չէ.**

1) Վայոց ձորի մարզին
2) Թուրքիային
3) Ադրբեջանին
4) Իրանին

36 **Ո՞ր ջրանցքն է քարտեզում նշված Գ տառով.**

1) Նալբանդի
2) Կոտայքի
3) Լոռու
4) Շիրակի



37 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Է տառով.**

1) Դիլիջան
2) Իջևան
3) Սևան
4) Ճամբարակ

38 **Ո՞ր շարքի բոլոր երկրներն են հարուստ նավթի պաշարներով.**

1) Իրան, Ճապոնիա, Ինդոնեզիա
2) Ռուսաստան, Ադրբեջան, Բելառուս
3) Քուվեյթ, Իրաք, Վենեսուելա
4) Սաուդյան Արաբիա, Իտալիա, Ուկրաինա

39 **Տրվածներից ո՞րը մթնոլորտի աղտոտման բնածին աղբյուր չէ.**

1) անտառային հրդեհը
2) հրաբուխը
3) փոշեհողմը
4) ավտոմոբիլային տրանսպորտը

40 **Մթնոլորտում կախված վիճակում հանդես եկող պինդ և հեղուկ նյութերի մանր փոշենման մասնիկները կոչվում են.**

1) ֆենոլներ
2) ֆումարոլներ
3) աերոզոլներ
4) պեստիցիդներ

41 **Գրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային գագաթների համարները.**

1) Սիփան
2) Ծղուկ
3) Կաչկար (Քաջքար)
4) Սուկավետ
5) Թեժլեռ
6) Նեմրութ
7) Արամազդ
8) Գոմշասար

42 **Գրել այն լեռնային համակարգերի համարները, որոնք Եվրոպայում են.**

1) Հիմալայներ
2) Տյան-Շանի լեռներ
3) Մեծ Կովկաս
4) Պիրենեյներ
5) Կարպատներ
6) Ալթայի լեռներ
7) Սկանդինավյան լեռներ
8) Վերխոյանսկի լեռներ

43 **Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայաններին.**

1) Կանադա
2) Բրազիլիա
3) Ռուսաստան
4) Թուրքիա
5) Ճապոնիա
6) Չինաստան
7) Իրան
8) Ֆրանսիա

44 **Տրված տրանսպորտի տեսակները դասավորել համաշխարհային բեռնաշրջաշառության կառուցվածքում ունեցած կշռի նվազման կարգով.**

1) երկաթուղային
2) ծովային
3) խողովակաշարային
4) ավտոմոբիլային

45 **ՀՀ գյուղական բնակավայրերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Արմավիրի և Արարատի մարզերում գյուղական բնակչության տեսակարար կշիռը ցածր է:
2) Սյունիքի և Լոռու մարզերում գյուղական բնակչության տեսակարար կշիռը բարձր է:
3) Բարձրլեռնային գոտու գյուղական բնակավայրերի ցանցը նոսրացել է:
4) Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը մեծացել է:
5) Սյունիքի և Արագածոտնի մարզերում տիրապետողը գյուղական համատարած տարաբնակեցումն է:
6) Ամենաբարձրադիր գյուղը Վերին Շորժան է՝ Գեղարքունիքի մարզում:

Բ մակարդակ

46 **Երևան (արլ. ե. 44° 30′) և Իրկուտսկ (արլ. ե. 105°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.**

1) 3 ժամ
2) 4 ժամ
3) 1 ժամ
4) 2 ժամ

47 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Երկրագնդի ամենամեծ բացարձակ խորությունն ունեցող կետը Ատլանտյան օվկիանոսում է:
2) Երկրի մակերևույթի բոլոր անհարթությունների ամբողջությունը կոչվում է ռելիեֆ:
3) Զուգահեռականները հատակագծի կամ քարտեզի՝ տեղանքի հավասար բացարձակ բարձրություն ունեցող կետերը միացնող գծերն են:
4) Բացարձակ բարձրությունը ցույց է տալիս, թե Երկրի մակերևույթի որևէ կետ որքանով է բարձր մեկ այլ կետից:

48 **Ո՞ր շարքի գետերն են հոսում արևմուտքից արևելք ուղղությամբ.**

1) Դանուբ, Ամուր, Յանցզի
2) Օբ, Լենա, Վոլգա
3) Ինդոս, Մեկոնգ, Տիգրիս
4) Դնեպր, Իրավադի, Ենիսեյ

49 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Մթնոլորտային ճնշման գոտիների առաջացման պատճառը Երկրի վրա ջերմության անհավասարաչափ բաշխումն է:
2) Արևադարձային գոտիներում օդը կատարում է վարընթաց շարժում:
3) Երկրագնդի վրա օդը մշտապես շարժվում է բարձր ճնշման գոտուց դեպի ցածր ճնշման գոտի:
4) Վարընթաց շարժում կատարող օդը հագենում է և առաջացնում առատ տեղումներ:

50 **Ո՞րն է բնության բաղադրիչների ճիշտ զուգորդությունը.**

1) անապատ — սևահող — օշինդր, ուղտափուշ
2) տափաստան — մոխրագորշ հող — փետրախոտ, սիզախոտ
3) տայգա — պոդզոլային հող — եղևնի, սոճի
4) տունդրա — կմախքային հող — լորենի, հացենի

51 **«Սահմանակից երկրներ — լեռներ» զուգորդումներից ընտրել ճիշտը.**

1) Թուրքիա — Իրան — Պոնտական
2) Լեհաստան — Չեխիա — Ալպեր
3) Ֆրանսիա — Իսպանիա — Պիրենեյներ
4) Ուկրաինա — Ռուսաստան — Կարպատներ

52 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Նեգրոիդ և եվրոպեոիդ ռասաների խառնածինները կոչվում են մուլատներ:
2) Ռուսները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական լեզվախմբին:
3) Աշխարհի լեզուները միավորվում են 50 խոշոր լեզվաընտանիքների մեջ:
4) Արևմտյան Եվրոպայի երկրներն աչքի են ընկնում բնակչության բարձր բնական աճով:

53 **«Երկիր — նավահանգիստ» զույգերից ընտրել *սխալը*.**

1) Գերմանիա — Համբուրգ
2) Ռուսաստան — Մուրմանսկ
3) Ֆրանսիա — Մարսել
4) Բելգիա — Ռոտերդամ

54 **Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:
2) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է սև մետաղաձուլությունը:
3) Քարածխի պաշարներով աշխարհում առաջինն է:
4) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը արտադրվում է ջրէկներում:

55 **Բնութագրումով որոշել պետությունը.**

«Մեծ յոթնյակ»–ի անդամ այս պետությունն ըստ պետական կարգի խորհրդարանական հանրապետություն է: Հարուստ է մարմարի ու սնդիկի պաշարներով: Երկրում բարձր է ուրբանիզացման մակարդակը, սակայն ի տարբերություն այլ եվրոպական երկրների՝ այստեղ շատ չեն խոշորագույն քաղաքները: Ո՞րն է այդ երկիրը.

1) Գերմանիան
2) Մեծ Բրիտանիան
3) Իտալիան
4) Ֆրանսիան

56 **ՀՀ լեռնագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Աշոցքի սարահարթում են Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները:
2) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:
3) Սևանա լիճը եզրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
4) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:

57 **Տավուշի մարզի հյուսիսի ցածրադիր հովիտներում կլիման.**

1) չափավոր ցամաքային է
2) չոր և խիստ ցամաքային է
3) չոր մերձարևադարձային է
4) բարեխառն լեռնային է

58 **Արարատի մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) ցեմենտի
2) մսի
3) գինու–կոնյակի
4) պահածոների

59 **Ի՞նչն է ընդհանուր Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համար.**

1) Սահմանակից են Նախիջևանի Հանրապետությանը:
2) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղ է գունավոր մետաղաձուլությունը:
3) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղերից է հանքային ջրերի արտադրությունը:
4) Գերակշռում են անտառային լանդշաֆտները:

60 **Խաղողագործական շրջան չէ.**

1) Արփայի հովիտը
2) Շիրակի դաշտը
3) Սյունիքի հարավը
4) Արարատյան դաշտը

61 **Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով.**

1) Բանգլադեշ
2) Չինաստան
3) Ինդոնեզիա
4) Հնդկաստան

62 **Գրել Արևմտյան Եփրատի հովտում ընկած դաշտերի համարները.**

1) Ալաշկերտի
2) Բասենի
3) Կարնո
4) Մշո
5) Մասրիկի
6) Շիրակի
7) Արարատյան
8) Երզնկայի

63 **Գրել այն երկրների համարները, որոնք կառավարման ձևով բացարձակ միապետություններ են.**

1) Նիդերլանդներ
2) Սաուդյան Արաբիա
3) Ճապոնիա
4) Իսպանիա
5) Դանիա
6) Նորվեգիա
7) Շվեդիա
8) Օման

64 **Գրել երկաթաքարի հանքավայրերի համարները.**

1) Ալավերդու
2) Աբովյանի (Կապուտան)
3) Քաջարանի
4) Մեղրու (Շվանիձոր)
5) Սվարանցի
6) Քաջարանի
7) Հրազդանի
8) Մեղրաձորի

65 **Երկրի գետային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 9 մլն տ բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 630 մլն տ•կմ: Որքա՞ն է բեռների փոխադրման միջին հեռավորությունը:**

(66-67) Երկրի բնակչության թիվը 4 մլն է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 14 000 մարդ, արտագաղթը՝ 6 000 մարդ.

66 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

67 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

(68-69) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 500 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ 25^0: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը $+13^0$ է (հաշվարկը կատարել 6^0–ով).

68 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

69 Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

70 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:
2) Մեծ ավազան սարահարթում տարածվում է կիսանապատային լանդշաֆտը:
3) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամա–սերում առաջացել է Կոորդիլիերների լեռնային համակարգը:
4) Ամբողջովին արևելյան կիսագնդում է:
5) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքներն առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
6) Հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը: